

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի

2020 թվականի հոկտեմբերի 6 թիվ 03 նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝ _____ Ն.Ավետիսյան

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

1. ՆԱԽԱԲԱՆ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) գիտության միջազգայնացման քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) միտված է Համալսարանում գիտության միջազգայնացման մեխանիզմների և խնդիրների մշակմանը:

Համալսարանական գիտության գլոբալիզացիայի միտումները սերտորեն կապված են միջազգայնացման հետ: Գլոբալիզացիայի երևույթը կարելի է համարել համարշխարհային երևույթների շղթա, որն ազդում է մարդու կյանքի, աշխարհի կարգի և դրա տարբեր ոլորտների վրա: Համալսարանական գիտության զարգացմանը համահունչ՝ գլոբալիզացիա տերմինը կարելի է համարել որպես գործընթացների և կառուցածքների լայն շրջանակ, որը որոշում է համարշխարհային գիտության տարբեր բաղադրիչների փոխկապակցումը, փոխկապակցվածությունը, ինչի արդյունքում ապահովվում է նրա ամբողջականությունը՝ որպես համաշխարհային հանրության գիտական մտքի և հետազոտության արդյունք:

Խոսելով միջազգայնացման և գլոբալիզացիայի հայեցակարգերի հարաբերակցության մասին՝ դրանք չեն նույնականացվում, որովհետև միջազգայնացումը ենթադրում է համալսարանական գիտության և հիմնարար

գիտական դպրոցների ազգային համակարգի պահպանում և զարգացում, իսկ գլոբալիզացիան՝ դրանց ապամոնտաժումն է:

Միջազգայնացումն ընդունում է գիտական բազմակարծության ճանաչումը, մշակույթների ինտենսիվ երկխոսությունը, բազմամշակութային իրավասությունների ձևավորումը և հանդուրժողական վերաբերմունքը տարբեր գիտական դպրոցների տեսական հայացքների նկատմամբ: Համալսարանական գիտության միջազգայնացումը զարգացման մեջ է, որը լայնածավալ երևույթ է, և կարելի է առանձնացնել մի քանի որակական մակարդակ:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում համալսարանական գիտության միջազգայնացման ամենաբարձր մակարդակի՝ միջազգային ռազմավարական գործընկերության հասնելու համար: Գործընկերությունն ավելին է, քան համագործակցությունը, քանի որ այն ներառում է գործընկերների կողմից նախագծային մշակույթի զարգացում, ռազմավարական զարգացման հիմնախնդիրների նոր այլընտրանքային լուծումներ գտնելու գործընթաց, պարունակում է պայմանագրային պարտավորություններ և գիտական ու կրթական ծառայությունների որակի բարելավման համակարգ, որը բոլոր գործընկերներն ուսումնասիրում և զարգացնում են:

2. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Բուհի գիտական և նորարարական գործունեության միջազգայնացման համար անհրաժեշտ է՝

- բարձրացնել գիտական գործունեության ցուցանիշը բարձր վականիշ ունեցող գիտական հրատարակչություններում հողված տպագրելու քանակի ավելացման միջոցով,
- ներդնել միջազգային գիտաժողովներին ՊԴ կազմի և ուսանողների մասնակցության աջակցության մեխանիզմներ,
- ակտիվացնել միջազգային ցուցահանդեսներում, գիտաժողովներում համալսարանի դասախոսների մասնակցությունը,

- ավելացնել համալսարանում իրականացվող միջազգային ցուցահանդեսների, գիտաժողովների քանակը՝ հաշվի առնելով համալսարանում կարևորվող գիտական ուղղությունները,
- ստեղծել արտասահմանյան գիտական գործընկերների բազա,
- կազմակերպել և իրականացնել համատեղ դրաշնորհային ծրագրեր,
- ավելացնել իրականացվող գիտական միջազգային ծրագրերի քանակը,
- ներդնել գիտական աշխատանքների համար արդի միջազգային չափանիշներ,
- ընդլայնել համագործակցության շրջանակները աշխարհի գիտական հաստատությունների և գիտնականների հետ,
- համագործակցության պայմաններ ստեղծել Սփյուռքի գիտնականների հետ, ովքեր աշխատում են առաջատար համալսարաններում, հետազոտական աշխատանքներում և նախագծերում,
- պայմաններ ստեղծել միջազգային գիտական ծրագրերում և հետազոտություններում համալսարանի հետազոտողների քանակն ավելացնելու համար,
- պայմաններ ստեղծել, որպեսզի համալսարանի առաջատար դասախոսները ունենան լայն հնարավորություն ներկայացնելու իրենց նվաճումները միջազգային հանրայինում,
- զարգացնել միջազգային և հանրապետական գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը,
- համաշխարհային և տեղական գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում հաստատել սեփական դիրքը,
- հանրահռչակել համալսարանի ուսումնագիտական, գիտաստեղծագործական ներուժի մասին՝ նպաստելով հանրապետական և միջազգային հնարավոր ծրագրերում Համալսարանի ՊԴ կազմի նեգրավմանը՝ Համալսարանի գիտատեխնիկական հնարավորությունների կիրառմամբ,
- ապահովել միջազգային դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու Համալսարանում տարածումը, ինչպես նաև այդ ծրագրերին մասնակցության աջակցություն,

- ճշտել Համալսարանի ՊԴ կազմի համագործակցային հնարավորությունների շրջանակները և նպաստել դրա ընդլայնմանն ու զարգացմանը,
- կազմակերպել միջազգային գիտաժողովներ և միջոցառումներ, որոնք կարող են ներկայացնել համալսարանի հետազոտությունները և գիտական ներուժը միջազգային հանրության,
- արտերկրում գիտական պրակտիկայի հնարավորությունների ստեղծում և ընդլայնում,
- օտարերկրյա փորձագետների կողմից գիտական զեկույցների, սեմինարների և դասախոսությունների կազմակերպում,
- օտար լեզուների զարգացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում և կազմակերպում: